# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 36-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձի առթիվ հաճեցեք ընդունել Մեր սրտաբուխ ողջույնները և ամենաջերմ բարեմաղթությունները մեր վերածնված Հայրենիքի հարատև վերելքի ու ծաղկման համար, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Մեր ջերմագին ողջույնները և լավագույն բարեմաղթությունները Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձի առթիվ: Աղոթում ենք առ Աստված մեր սիրելի Հայրենիքի վերելքի ու ծաղկման, հայ ժողովրդի բարօրության ու վերամիավորման համար Հայրենի Հողի վրա, սովետական ժողովուրդների համերաշխ, եղբայրական ընտանիքում:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցիք ընդունել Մեր սրտագին ողջույնները և ամենաջերմ բարեմաղթությունները Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ պանծալի տարեդարձի առիթիվ: Թող խաղաղ մնա մեր վերածնված Մայր Հայրենիքը և ավելի ևս շենանա ու բարգավաճի՝ ներշնչանքություն համայն հայ ժողովրդի:

Վ. Ա Զ Գ Ե Ն  Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցեք մեր անկեղծ շնորհակալությունները Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձի առիթիվ Ձեր ուղարկած շնորհավորական հեռագրի համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ